

պետական ծերունին. նա այդ օրերում լուռթեամբ երևի լացեց իր աստուածաշնչի վրայ, որին շատ էր հաւատացել, լացեց նաև իր հայրենիքի անդառնալի կորուստը: Օգնութիւն չկար, և երկու հանրապետութիւններն ընկան վերջնականապէս. էլ ոչինչ չէր մնում դժբախտ ծերունուն, բայց եթէ մեռնել, և այդ օրումանիցնա մեռնում էր կամաց-կամաց: Յուլիսի 14-ը մեծ մարդու հոգու այդ մեծ տրագեդիայի վերջին գործողութիւնը կնքեց:

Ա. Ա.

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՔԱՆԱՍԱՆՔ»։ Մարտ—ապրիլ — Ինչպէս անցեալներում հազորդեց «Հանդէս Ամօրեայ», պրոֆ. Ստըր-զովսկի պնդում է, թէ Աախէնի մայր եկեղեցին Գերմանիայում և Ժերմինյի-դէ-Պրէ (Germigni-des-Prés) եկեղեցին Ֆրանսիայում շինուած են հայկական ոճով:

Այժմ այս առթիւ խօսելով պ. Գ. Բասմաճեան իր ամսագրի վերջին համարում՝ դալիս է այն բաւականին համարձակ և ուշադրաւ եղբակացութեան, թէ աթենական Պարթենոնի և հայկական-ուրարդեան Մուցացիք քաղաքի (այժմ Քէլիշին դիւղ) կառուցած Խալդէա և Բաղրարտու աստուածների տաճարի մէջ ոճի մեծ նմանութիւն կայ:

«Ննթադրութեան» բաւական դժբաւոր ապացոյց է, ասում է պ. Գ. Բասմաճեան, Պարթենոնի և Մուցացիքի տաճարներուն ճակատի պսակին (fronton) նմանութիւնը: Ճակատի պսակին այս եռանկիւն ձևը կրող ամենահին յիշատակարանն է՝ բոլոր աշխարհիս մէջ՝ Մուցացիքի տաճարը: Ուրարտացիներու հետ մշտական շրջումի ու պատերազմի մէջ գտնուող աղբերէն և ոչ մէկը, մէջ Ասորեստան և մէջ Բաբելոն, երբէք չեն ունեցած այս

եռանկիւնը, որ նախ անցած է փոխադարձներու և լիւզացիներու, յետոյ՝ ասոնց միջոցով մտած է Աթէնք, և ետքն ալ Պարսկաստան, Գիւրոսի արշաւանքներու հետեանքով: Գիւրոսի ժամանակ (558—529 թ. ա.) շատունց կործանած էր Մուցացիքի տաճարը, ուստի չէր կրնար անոր վրայէն կաղապարել՝ Գիւրոսի եռանկիւնի ճակատով դամբարանը շինող ճարտարագետ—քանդակագործը:

«Որոշ կերպով չի դիտցուիլ թէ մեր հիմնուած է Մուցացիքի տաճարը. բայց հաւանական կը կարծեմ թէ Ուրարտուի Թագաւոր Իշպուկինի (Քրքիստոսէ առաջ 828—784 ?) ժամանակ շինուած լինի այն. վասն զի Մուցացիքի վրայ առաջին անգամ արշաւող և իրեն հպատակեցնողն եղած է մյս Թագաւորը. իսկ տակաւին հաբիւր տարի չ'անցած՝ Մուցացիք քաղաքը և անոր տաճարը հիմնադրուած եղած են Ասորեստանի Թագաւոր Սարգոնի (722—705 թ. ա.) ձեռքով, Քրքիստոսէ առաջ 714 թուականին.

«Մուցացիքի տաճարի ճարտարագետական ոճը չէր կրնար օրինակուիլ «յունական» կոշտ ու ձեւերէն, քանի որ յունական ճարտարապետութեան ամենահին ներկայացուցիչը—Պարթե-

նոնի տաճարը—շինուած է Պերկլէսի ժամանակ, Քրիստոսէ առաջ 454—438 թուականներուն, Փիդիասի հսկողութեան տակ։ Ուրեմն Մուցացիքի տաճարը երեք հարիւր տարիի շափ առաջ շինուած է, քան Պարթենոնի տաճարը։

Որեւէ ժողովրդի փիլիսոփայութիւնը, զեղարունստն ու ճարտարագիտութիւնն ինչքան և ինքնուրոյն, առանձնայատուկ համարուելու հանգամանքներն ունենան, ինչպէս Յունաստանում, այնուամենայնիւ ազատ չեն կարող համարուել օտար անելի կամ պակաս ազդեցութիւնից։ Ժողովուրդների հոգևոր կեանքի շղթան ժամանակի և տարածութեան մէջ անընդհատ է։ Յունական փիլիսոփայութեան վրայ արեւելքի ազդեցութիւնն ահագին է, զարմանալի չի լինի, որ այդ երկրի ճարտարագիտութիւնն էլ որոշ տարրեր փոխ առած լինի իր մօտաւոր կամ հեռաւոր հարևաններից։ Այս գէպում քաղաքակրթութեան աստիճանն էլ առանձին նշանակութիւն չունի, շատ անգամ անելի բարձր կանգնած ժողովուրդ հնարաւոր է գտնում որեւէ օրիգինալ, նոր բան փոխ առնել քաղաքակրթական անելի ստոր աստիճանի վրայ կանգնած ժողովուրդից։ Յունական Պարթենոնի ճարտարագիտական սքանչելի հիւսուածքի մէջ Արեւելքը կարող է իր բաժինն ունենալ, բայց պնդելու համար, որ այդ ազդեցութիւնը հայկական է, կարծում ենք՝ մի փոքր համարձակ վճիռ է. և երևի պ. Բասմաճեան իր այդ թեզը վերջը նախնապէս համոզիչ դարձնելու համար հարկաւոր կը համարի էլի նոր փաստեր տալ։ Այն, որ Պարթենոնը Մուցացիքի տաճարից յետոյ է շինուած և միևնոյն ժամանակ որոշ նմանութիւններ ունի երկրորդին, անշուշտ շատ հետաքրքիր է, բայց կարծում ենք անբաւարար է այդ հետաքրքրի թեզը կատարելապէս ապացուցանելու համար։ Միթէ այդ երկսի ոճն էլ չէին կարող մի երջորդ ընդհանուր աղբիւր ունենալ և այն ճշ

հայկական։ Որքան հին տաճարներ կան, որոնց հետքն անգամ լիզել է ժամանակը, իսկ Արեւելքը քանի՜-քանի՜ քաղաքակրթութիւնների դամբարան է։

«Արեւելեան Մամուլ». Յունիս 16. — Մ. Մամուրեանի շարաթաթերթի այս համարում ուշագրաւ անդեկութիւն ենք գտնում ս. Գարապետի վանքում գոյութիւն ունեցող մի վարժարանի մասին։ Այցելու հեղինակը (Ռ. Զարգարեան) այդ կրթական հաստատութիւնը համարում է «բարձրագոյն վարժարան»։ Եթէ ընդունենք, որ մեր թիւրքահայ եղբայրները ածականների գերադրական վերջաւորութեանը համար մասնաւոր թուութիւն ունին, այնուամենայնիւ կը մնայ մի վերին ստիճանի հետաքրքիր հաստատութիւն ս. Գարապետի վանքում։ Ահա թէ ինչ է առում այդ մասին պ. Ռ. Զարգարեանը.

«Գը կարծեմ, թէ խիստ քիչեր տեղեկութիւն ունին հետունները մասնաւանդ մեր կողմի գաւառները այս կրթական հաստատութեան նկատմամբ, որը սակայն պէտք էր վաղուց ծանօթեղած ըլլար։ Վարժարանը գիշերօթիկ և թոշակաւոր ուսանողներ միայն կ'ընդունի, բաժնուած ըլլալով վեց դասարաններու։ Նախաժողովի համար՝ ներկայացող աշակերտներէն կը պահանջուի հայերէն հասարակ ընթերցանութեան լաւ վարժութիւն, թուարանական չորս գործողութիւն և քերականական սկզբնաւորութիւն։ Իբրև տարեթոշակ առաջին տարուան համար բացառաբար 11¹/₂, իսկ միւս տարիներուն իւրաքանչիւրին համար 11-ական ոսկի։ Այս տարի աւարտած է վարժարանին նոր շէնքը ամբողջ սրբաւոր քարով, ընդարձակ ու բարձրադիր, բաղկացած լուսաւոր և օդատուն մեծ սրահէ մը, որուն մէջ կը բացուին դասարանները։ Սրահը զարդարուած է իւղաներկ և ջրաներկ պատկերներով, ամենքն ալ աշակերտներու կամ ուսուցչին գործերը, որոնք առաջին նախուածքով չպիտի կրնային.

զանազանով ամենակն եւրոպական արտադրութիւններէ, այնքան գոյնի և բնականութեան յաջողութիւնը կը կրեն իրենց վրայ: Սրահի դռան վերեւ, ճակատը՝ Ազն. Դէրզէ Էֆ. Էսայանի իւղաներկ մեծադիր պատկերը, արժանի այդ յարգանքին և կարծես յուշարար ուսանողներու առաքինութեան, քանի որ ինք կամ իր գաւաինները 1889—1896՝ 1020 ոսկի գումար մը նուիրած են նոյն կրթական հաստատութեան ինքնարեւարարը:

Այս վարժարանի վերին հսկողութիւնը վարում է Տրդատ եպիսկոպոս Պալեան իրան օգնական ունենալով վանքի երկու երկտասարդ միաբանները՝ Տրդատ և Սմբատ վարդապետները: Կան նաև մի խումբ աշխարհական ուսուցիչներ: Դասախօսուող առարկաները են՝—կրօնադիտութիւն, պատմութիւն, օսմաներէն, իրաւագիտութիւն և տոմարակալութիւն, Ֆրանսերէն, բուսաբանութիւն, հայերէն և ընդ. պատմութիւն, բնական և շափական գիտութիւններ, զծագրութիւն և աշխարհագրութիւն: Վարժարանն ունի նաև այցելու բժիշկ և երկու գիշերապահ: Աշակերտների թիւը վաթսուս է:

Այս նկարագրութիւնից պարզ է, որ ս. Կարապետի գիշերօթիկ պարոցը՝ միջնակարգ կրթական հաստատութիւն է, որ մօտենում է եւրոպական կոլլեժներին:

Այսպէս թէ այնպէս ս. Կարապետի վանքում, որի շուրջը այնպէս հոծ հայ ազգաբնակչութիւն կայ, այսպիսի մի կրթական հաստատութեան գոյութիւնը մի խոշոր և վերին աստիճանի միւլթարական երևոյթ է և արժանի ամենալուրջ ուշադրութեան և ամենաքննարկող հոգածութեան:

Եւ պ. Զարդարեան իրաւացի կերպով ասում է.

«Այս վարժարանը պէտք է որ ճանչցուի ամեն կողմ և պէտք է որ սիրով ամենուան կողմէ, որովհետև դասանդներու օտար բարձրագոյն վարժարաններու դէմ արդէն սկսած է հակա-կրքիւ մը ստեղծել հիմա և վաղը միւս

օրը կարգ մը յաւելումներով ու քիչ մը բարձրացումով կոչուած է յաջող մրցակից մը հանդիսանալու:

Ի դէպ՝ յիշեալ տողերի հեղինակ Ռ. Զարդարեանի մօտին: Դա մի ծանօթ անուն է թիւրքահայ զբաղանու-թեան մէջ: Զարդարեան և Թլկատացի զաւառացի, ժողովրդից ծնւած վիշապիւններ են, որոնք վերջին տարիներու կարողացան ստեղծել զբաղան մի նոր հոսանք՝ ներս բերելով թիւրքահայկական զբաղանութեան մէջ ազգային ժողովրդական տարրը: Դասաւրճ մուսուլման ու տանջուած հայ գիւղացին նրանց գրչի տակ լսօսեց, բաց արեց իր դարգոտ սիրտը, և նրա լսօսքը ցնցող էր ու թմրեց, ուժեղ և պարտ-րիշ, որպէս լեւների կուսական շունչը: Բոսֆորեան ճոռոմ և էկզոտիկ զբաղանութեան լուծն էր թօթափում: Խրիմեան, Սըրուսձտեան, Սարգսեան և ուրիշները զուր չէին աշխատել տա-րիներ տալով: Համակրելի և տա-ղանդաւոր Զարդարեան երկար տարի-ներ անցկացրեց հայրենի ժողովրդի մէջ ուսուցչական պաշտօնով, ապրեց նրա ցաւերն ու ուրախութիւնները:

Այժմ, ինչպէս լսում ենք, նա թողնում է Խարբերդ և անցնում է անլի խոշոր կինոթոն—Ջմիւռնիս: Ներկա դասում կացութիւնն անհանդուրժելի էր դարձել զրոյի համար, որովհետև՝ ինչպէս մի քանի ամիս առաջ հաղորդեցին արտասահմանեան հայ թերթե-րը՝ Զարդարեան բանտարկուած է եղել: Նա այժմ գտնուում է Ջմիւռնիս-յում:

«Համակրելի զբաղէտը, ասում է նոյն «Արեւելեան Մամուլը», մինչև առաջիկայ տարեշրջանի վարժարանաց վերաբացումը պարտաւոր է ստանձնելու մասնաւոր դասերը:

Մասնաւոր դասեր... դժբախտ հայ զբաղանութիւն, որի մշակների գերա-գոյն ապաւէնը մնում են միշտ ձանձը-րալի, խղճով դասերը: Մասնաւոր դաս է տալիս և՛ երկտասարդ հայ սկսնակը, և՛ յայտնի զբաղէտը, և՛ մի ամբողջ լաւ սերնդից մնացած զաւա-

մեալ մոհիկանը: Իր ծեր օրերում ջր-
րադացյան դարձած Խորենացու լե-
զենդան կարծէք ճակատադիր է դար-
ձել: վախճանի ուր է այս կացութեան:

«Ա.Ասիսի».— Այլիւ—մայիս:—
Պարիզի հայ ամսագիրը իր այս թուով
մի վերին աստիճանի ցաւալի կորուստ
է դուժում, որ անփութարինելի լինե-
լու բոլոր դառնութիւնն ունի:

«Այլիւ 19-ի օրը հողին յանձնե-
ցինք Գրիգոր Գիւլպէնկը, և իր քսան-
ներք տարիներուն սիրուն ու թարմ
փունջին հետ՝ թաղեցինք փայլուն ա-
պագայի մը ապահով յոյսերուն անդին
դրասանդը: Այդ անհունապէս տարա-
ժամ մահը, որ խեղճ Գրիգորին աբիւ-
նակիցներուն ու մտերիմներուն համար
անմիթարելի կսկիծ մը եղաւ, պիտի
ողբացուի նաև ամբողջ հայ ազգէն: Գրիգոր
Գիւլպէնկ սահմանուած էր
Քոմանի Փրանսէզին մէջ տեղ մ'ունե-
նալու»:

Գրիգոր Գիւլպէնկ 1900-ին Պարիզ
է եկել և շնորհիւ աչքի ընկնող դե-
րասանական ձիրքերի զբաւել է հըռ-
չակաւոր Մունէ-Սիւլիի ուշադրութիւ-
թիւնը: Վերջինիս համակրութիւնն
ու հատուր դէպի երկատարդ հայի
բնական փայլուն ապագան այնքան
մեծ է եղել, որ նոյնիսկ հակառակ իր
սովորութեան յանձն է առել անձամբ
հետեւել նրա դարգացմանը և մշակու-
թեանը: Եւ նրա յոյսերն արգարացել
են կարճ ժամանակու: Այնուհետև
նշանաւոր վարժապետը իր սիրելի ա-
շակերտին իր հետ տարել է Փրանսիա-
կան դաւառներ բնծ դուրս դալու փո-
քըր դերերի մէջ: Նոյնքան հետաքըր-
բութիւն և ուշադրութիւն է նուիրել
Գիւլպէնկեանին և՛ Մունէ-Սիւլիի եղբ.
Պօլ-Մունէ: Ցարաբախտաբար երկու
տարի յետոյ երկտասարդը հիւանդա-
ցել է թոքախտով: Չնայելով դրան՝ նա
1903-ին կարողացել է յաջողութեամբ
անցնել Պարիզի կոնսերվատուարի
քննութիւնը: Եւ երեկ հէնց այդ աշ-
խատանքն է մահացու եղել, որովհե-
տև կացութիւնը վատացել է արագու-

թեամբ, և մահը վրայ է հասել երիտա-
սարդ արտիստին ապրիլի 19-ին՝ Խո-
րին ցաւ պատճառելով իր Փրանսիա-
ցի վարպետներին. բարեկամներին և
հայ զաղութին: Փրանսիացի բարե-
կամները խնդրել են հանգուցեալի եղ-
բօրը Արտ. Գիւլպէնկեանին, որ թոյլ
տայ իրանց Գրիգորի գերեզմանի վը-
րայ մահարձան կանգնեցնել: «Պ. Գիւ-
պէնկեան, ասում է «Անահիտ», տեղի
տուաւ իր եղբօր օտարազգի բարե-
կամներուն այդ ազնիւ փափազին առ-
ջև, նկատելով որ անոնց այդ տենչին
իրականացումը մեր ամբողջ ցեղին
համար պատուարեր ու սրտաշարժ
արտայայտութիւն մըն էր՝ զոր մե-
հնար էր մերժել: Մունէ-Սիւլիի մտա-
դիր է այդ մահարձանին վրայ զետե-
ղել իր ձեռքով իսկ քանդակուած մե-
տայօն մը Գրիգորին դէմքը ներկայա-
ցընող»:

«Անահիտ»-ի նոյն թուից իմանում
ենք նշանաւոր հայ նկարիչ Ջահի-
նի մի նոր յաջողութիւնը: «Փրանսիա-
կան կառավարութիւնը զնած է, ա-
սում է «Անահիտ», մին այն գեղեցիկ
գծադրութիւններէն, զոր էտկար Ջա-
հին ցուցադրած է այս տարուան
«Ջան-տը-Մարտի Սալօն»-ին մէջ, շաբթ
մը նոր փորագրութեանց հետ. այդ
գծադրութիւնը պիտի դրուի Լիւքսամ-
պուրի մուտքէն, որու վարչութիւնը
խնդրած է նաև Ջահինէն, որ հաճի
նուիրել իր փորագրութեանց ամբող-
ջական հաւաքածուն: Հաճոյքով կ'ի-
մանանք նաև թէ Ջահին Sociétaire
ընտրուած է «Ջան-տը-Մարտի Սալօն»-ը
կազմակերպող և վարող գեղարուես-
տից ազգային Ընկերութեան»:

Այս բոլորը լաւ է. մենք հաճոյքով
բաժանում ենք «Անահիտ»-ի ուրախու-
թիւնը: Սակայն չենք կարող այս առ-
թիւ մի փոքրիկ նկատողութիւն չա-
նել: Պ. Էտկար Ջահինի գործերին ի
մօտոյ ծանօթ չենք, գիտենք միայն,
որ նա իբրև գեղարուեստագէտ արդէն
բաւական յայտնի անուն է ունի Փը-
րանսիայում, նաև դուրսը: Կան

Պարեզում կան և ուրիշ հայ արուստագէտներ աւելի կամ պակաս յայտնի անուններով, որոնք ամենքը միասին մեր ցեղական հանճարի պայծառ ցուքներն են օտարներէ առաջ: Սա ինքնընտանեան անկաս նրանց ընտրած նիւթից արգէն մի աշքի ընկնող ծառայութիւն է նրանց ծնունդ տուող ժողովրդին. բայց դա բոլորը չէ. Պարեզի հայ արուստագէտները՝ (մնաւաւսասամր - եթէ ոչ ամբողջովին - թիւրքահայեր) յաճախ ցաւալի մուսցութեան են տալիս իրանց երկերում իրանց շարատանջ, արեւնոսահայրենիքը. ուր այնքան շատ են ցնցող, աղետաբեր սիւժէներ. մենք առիթ ենք ունեցել այցելել Պարեզի Սալօնը, ուր ի միջի այլոց եղել են նաև շատ հայ արուստագէտներ զործեր, և նրանց մէջ համարեա ոչ մէկը, որ խօսէր հայ երկրից, մեր ժողովրդից, կամ պարզապէս ներկայացնէր մեր այնքան հետաքրքիր ընտանեկան, ժողովրդական կեանքի որեւէ ուշագրաւ կողմը: Միթէ հայ արտիստները, որոնք զեռ երեկ թողեցին այդ արեւնոս վայրերը, ոչ մի խոշոր ներշնչում բերած չեն իրանց հետ՝ օտար հորիզոններում, օտար երկրների տակ ուժգնօրէն արտայայտելու համար: Մեզ կ'առարկեն դուցէ, թէ «գեղարուստը հայրենիք չունի»: Ծեծում Բերդա... բայց հողին հայրենիք ունի, նա արեւնի թիւերով կապուած է մի երկրի հետ: Թող չմեղադրեն մեզ շօր, բիրտ ուտիլիտարիզմի մէջ. երբ ինդերը վերաբերում է մի ժողովրդի խորունկ. արեւնոս ցաւերին, ուտիլիտարիզմի մասին խօսք լինել չի կարող: Իսկական գեղարուստը գիտէ անհատական, ցեղական ցաւը տիեզերական դարձնել իր հոգը, ստեղծագործող շնչով: Ծաւի պօէզիան անհուն է և ազնուացնող: Մենք կ'ուզէինք. որ մեր թիւրքահայ արեստագէտները այդ խորունկ ճամբարութիւնը մուսցութեան շտապին. այն ժամանակ իւրաքանչիւր հայի ցնծութիւնն ու ինդակցութիւնը նրանց յաջողութիւններով պիտի կրկնապատկուէր:

«Բազմավէպ». Յուլիս. — Առաջնորդող յօդուածում սաստիկ ցաւ է յայտնում արտասահմանի հայ զաղութների՝ գէղի իրանց ծննդավայրը ցոյց տուած անտարբերութեան համար. «Արտասահմանի զաղթականութիւնը, առում է «Բազմավէպ», խաղաղ լճակի մը անտարբերութիւնը ցոյց կուտայ: Եւ ինչ հեղձուցիչ խաղաղութիւն, ինչ ապերշտիկ երջանկութիւն:

«Ո՛ւր է այն կենդանարար կազմութիւնը զորովի փոթորկէ: Հիմա սիրելի է մեռելական անհող ետականութիւնը: Դաղթականութեան սրտէն այլևս կը հալածուի հայրենիքի հովաններէն հասած հառաչներու մրմունջը: Ի նպաստ հայրենիքի փաժ խրթնիթներուն կազմակերպուած ընկերութիւնները, հանդէսները, թատրոնները, բանախօսութիւնները երթալով կը նուազին. արտասահմանը իր ետական տնուլ գեփիւտով կը փշէ երջանկութիւն մը. որ սակայն թոնաւոր է զաղթականներու թոքերուն համար: Ու հիմա կարելի է ըսել, որ օտար աստղերու տակ ծնած հանգստութիւնը մեզի համար մեռած ու նեխուած երջանկութիւն մըն է:

«Մեր մարմնոյն մեծ դանդուածներէն հոս արտասահման նոր հաննող դարիպներէն հարցնենք խալիկներ. մենք պիտի առնենք միութարական լուրեր, պիտի իմանանք, որ հոն գործական օրօրանին մէջ կեանք, կենդանութիւն, պարտաճանաչութիւն կայ, հոն ծնած են հասարակական այնպիսի առաքինութիւններ, որոնց առջև արտասահմանի անտարբերութեան ուրուականը շառագունած պիտի թաւկանայ: Եւ սակայն դարբիւ երջանիկներէն կ'անկալուի ինչեք...»

Արտասահմանեան հայ զաղութի, «դարեւ երջանիկներէ» բարոյական այս պատկերը շափազանց վհատեցուցէ է, եթէ ճիշտ է զժաղրուած: Բայց ինչո՞ւ միայն նրանք. հապա հայրենիքում եղած «երջանիկները...» որոնք անասնական փարթամութեան մէջ լողում են և իրանց կեանքով, իրանց

նիստ ու կացով քայքայում են ազգի բարոյական շէնքը: Ոչինչ, ոչինչ չի յուզում նրանց այս իւզոտ երջանկութիւնը, ոչ մի աղաթակ չի թափանցում նրանց հոգիներէ բրոնզեայ դռներէց: Սա էլ մի օտարացած զաղուժ է, բայց հայրենիքի մէջ, ակեղծութեամբ ծովում, մի պղնձութեամբ, ամայի, անիծութեամբ ժայռ, որի շոր կրծքի վրայ դալիս են փշուռելու բոլոր հեծեծող ալիքները: Հայի աւանդական բարեգործութիւնը հին ճանապարհը կորցրել է, նորը չի տեսնում, որովհետեւ կոյր է և խուլ:

«REVUE», 15 juin.— Յայտնի է, որ վերջին տարիներում խաղաղասիրական գործը քաղաքակիրթ երկրներում զգալի յառաջդիմութիւն է աւել շնորհիւ մի շարք յայտնի գործիչների, որոնց առաքելութեան նշանակում է ապագայում անկարելի դարձնել պատերազմները: Սովորաբար խաղաղասիրական այս շարժումը համարում է նոր և մեր ժամանակների ոգու արտայայտութիւն: Այժմ յայտնւում է, որ նման շարժում գոյութիւն է ունեցել մեզանից շատ առաջ, նոյնիսկ IX դարում: «Ոչինչ նոր արեւի տակ» Nil novi sub sole—ասում է Revue-ն. մի հին մագաղաթ է գտնուել, որ վերկայում է IX-դ դարում մի խաղաղութեան լիզայի գոյութիւնը: Այս լիզան անշուտ ներշնչութեամբ էր անտարանից և կազմակերպւում էր կրօնաւորների ձեռքով, և ղեկավարներն էլ եպիսկոպոսներ էին: Լիզան իւրաքանչիւր ծխի մէջ երկ-երկու աշխարհական պատգամաւորներ ունէր: Վերջինների պարտականութիւնն էր նիւթական օժանդակութիւն հաւաքել, բողոքներ լսել, և զսպել բմբոսներին կամաւոր միլիցիայի ձեռքով, որ կարգւում էր պաշտպանելու լիզայի հովանաւորութեան տակ գտնուող վայրերը:

«Պատմութիւնը մեզ ասում է, որ այս փորձը կատարեալ յաջողութիւն չունեցաւ. այս կանխաժամանակեայ շանքերը զույգ է իրեն արդիւնը ունե-

ցան այն սովորութիւնը, որի հիման վրայ խաղաղութեան որոշ օրեր (*Le treve de Dieu*—Աստու հանգիստ) սահմանուեցին: Այդ օրերում արգելւում էր կռուել. զանցառուները ենթարկւում էին կնիզեցական բանադրանքի: Հաղար տարուց յետոյ այս խաղաղասիրական կազմակերպութիւնը կարող է ծառայել որպէս նմուշ: Նշանակաւոր նոյնն է—Աստու զաղար տարեկան 365 օր նոյնիսկ 366 օր նահանջ տարիներում»:

„Русское Богатство“, 8 июня.— «Իշխան Մեշչերսկու հոգացողութիւնը ժամանակակից և ապագայ սերունդների մասին»: Այս վերնագրի տակ ռուս ամսագիրը առաջ է բերում ГРАЖДАНСТ-ի խմբագրի մի նոր տարօրինակ միտքը:

«Իշխան Մեշչերսկու Гражданств-ը, ասում է Рус. Богат.-ն, լուրջ կերպով մտահոգութեան մէջ է պատերազմի առաջ բերած տնտեսական դժուարութիւնների առթիւ: Պետութեան խաղաղ ժամանակի կարիքների համար նշանակուած ծախքերի կրճատումը կարող է առաջ բերել աղքատութիւն և աշխատանքի պակասութիւն, ինչպէս և արհեստական կերպով կանգ կ'առնի երկրի տնտեսական կեանքը: Այսպիպիսով վաստակի նուազման և ընդհանրապէս արտադրութեան սահմանափակման հետեանքը կը լինի և «ոգու թուլութիւնը», որ այնքան անհրաժեշտ է պատերազմը վարելու համար: «Պապերագմի ծանրութիւնը տանելու համար ժողովրդին պէտք է ամբաղնդել և ոչ թէ ծայրայեղ կերպով թուլացնել. այս ես համարում եմ մի ակիւսմամբ»:

«Խելացի խօսքեր, հաճելի է լսել, շարունակում է Рус. Богат., բայց դժբախտաբար իշխանի մնացած դատողութիւնները նոյնքան անվիճելի չեն: Նա «իրան թոյլ է տալիս ենթադրել, որ ներկայ Ռուսաստանի պատերազմական ծախքերին պէտք է մասնակից անել նաև ապագայ Ռուսաստանը և դրա համար պատերազմը

հարկաւոր է վարել որքան կարելի է քիչ՝ ի հաշիւ սովորական բիւզժետի և և որքան կարելի է շատ՝ ի հաշիւ փոխառութեան: Եւ այդ նրա համար, որ փոխառութեան տոկոսները վճարելու կը մասնակցի նաև ապագայ Ռուսաստանը, մինչդեռ պատերազմական ծախքերի համար սովորական բիւզժետի կը ճառատուից տուժում է միմիայն ժամանակակից Ռուսաստանը: Մի կողմ թողնելով, ասում է Р. С. БОГАТ.-ն, այս ծրագրի գործնականութեան հարցը, քննենք այն դուռ բարոյագիտութեան տեսական տեսակէտից: Նախ՝ մինչև 60 աստիճան ժամանակակից սերունդն իրաւունք ունի այս կամ այն պարտաւորութիւնների ծանրութիւնները դնել ապագայ սերնդի վրայ: Ո՛րքան մեծ է հայրերի իրաւունքը իրանց դասակներին բախտը ածորինելու: Եթէ հնում ծնողները ամուսնացնում էին իրանց դասակներին դեռ օրօրոցից և այդ համարում էին իրանց բնական իրաւունքը, այժմ մեզ այսպիսի իրաւունքը թւում է բարբարոսական...

«Ժամանակակից կարեւորների և շահերի մասին մտածելիս՝ մարդիկ յաճախ հակամէտ են շատ շնչին նշանակութիւն տալ ապագայ սերունդների շահերին: Միթէ մենք մտածում ենք նրանց մասին, երբ օրինակ անխնայ կերպով ոչնչացնում ենք անտառները և դարերով հողի տակ հաւաքում զանազանութիւնները, ինչպէս օրինակ քաղածուխը: Մենք կարծես ապրում ենք ի հաշիւ մեր գալիք սերունդների. — *après nous le déluge...* (մեզնից յետոյ ջրեհեղեղ): Բայց ի՞նչ կ'ասեն ապագայ սերունդները: Չնորհակալ կը լինին մեզանից:

«Առաջի հայեացքին իշխան Մեշչերսկու ծրագրերը իսկապէս. նմանու-

թիւն չունի վերը յիշած օրինակի հետ: Արդարև մենք չենք, որ պիտի օգտունենք «Միլիթեան մեծ ճանապարհի» և «Էշտառնոյ նաւահանգստի» առևտրական շահերով: Մենք ժամանակակիցներս հաղի որէ՛ք բարիք ստանանք Մանջուրիայի կամ Կորէայի տիրապետելուց «որպէս արդիւնք յաղթական պատերազմի»: Եւ զո՞ղ Արևի երկրի հետ: Մենք միայն առատութեամբ կը թափենք (ինչպէս որ թափել ենք արդէն) մեր արեւնը Մեծ Ովկիանոսի անհիւրընկալ ափերին... Սովորական արգարութիւնը չի պահանջում արդեօք, որ մեր յետնորդները, որոնց համար իսկապէս կատարւում է այս բոլորը, դոնէ դրամով վրձարէին իրանց համար պատրաստուած այս՝ դանձերի փոխարէն:

«Ըստ երևոյթին դա միանգամայն արդար կը լինէր: Բայց ջրան այն է, որ շատ յաճախ յետնորդների ճաշակը տարբերում է մերինից... Ի՞նչ կ'անէք, եթէ նրանք յանկարծ ասեն մեզ՝ ինչնեքի՞ն է պէտք ձեր Մանջուրիան, որ բնականաւոր է մեզ համար օտար ժողովրդով: Ճշմարիտ է, այդ ժողովուրդը ամբողջ դարեր քնած էր, բայց վաղ թէ ուշ նա կը զարթնի և հօգոր ու յողնաթիւ, դուք է կամենայ ուսով յետ խելի այն, ինչ մի ժամանակ նրան էր պատկանում: Ի՞նչ դրաւական ունի իշխան Մեշչերսկին մտածելու համար, թէ ինքը գտել է ճշմարտութիւնը:

«Անշուշտ մի ուրիշ ծայրայեղութիւն կը լինէր իսպառ խելի ժամանակակից սերունդների իրաւունքը հողալ և աշխատել ապագայի մասին: Բայց անկասկած է, որ պետական գործիչների ծրագրների և գործունէութեան մէջ սուրիեկտիւ և դիպուկածական շրջանը պէտք է հնարաւոր չափով նեղանայ:

Վ Ր Ի Պ Ա Կ

Անցեալ №-ում.

երես

157

տող

5. (ներքևից)

տպուած է

Հաւաքածանք

պէտք է լինի

Լեսսինգը